



“ԹՈՂ ՏՈՒՔԻ ՄԱՆԻ ՏՂՈՅԸ ՈՐ ԻՆՏԻ ՓԱՆ.” ԴՈՒԿ ԺԸ. 16.

ՀԱՏՈՐ ԻԵ.

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ, ԴԵԿՏԵՄԲԵՐ 1, 1896

ԹԻԻ 12



ՔԱՆԱՏԱՅԻ ՄԷՋ ԱԳԱՐԱԿԻ ՏՈՒՆ ՄԸ
 Երևակայութիւնով դժուած չէ այս պատկերը, այլ՝ Վիլթորիա Թադուհին փեսայ Լորնի մարգիդին ֆանատայի կառավարիչ եղած ժամանակը հանած մէկ լուսանկարէն օրինակուած է: Այդ հիւսիսային երկրին մէջ ձմեռուան դիչերները երկայն և ցերեկները կարճ են, իսկ ձիւնը շատ կը խորունկնայ և ամիսներով կը մնայ: Կը տես-

նէք զանգակը որով տան տիկինը ամառը արտերէն կէս օրուան ճաշի կը կանչէ բանուորները. կը տեսնէք նաև երկար սանդուղը որ հարկը պահանջած ատենը ձեղունին կրնայ հասնիլ երբ չէնքին փայտէ մասերը կրակ առնեն ծխնելոյցէն: Մենք Նիւ Ինկլընտի մէջ տեսած ենք ասոր շատ նման հին տուներ: Մէկ տունէն միւսը երթալու համար տասը տասնըհինգ ըսպէ քալել պէտք է, և սակայն յաճախ շատ հան-

գըսաւէտ տուներ են անոնք, և ֆանատայի և Միացեալ Նահանգաց մէջ գտնուող շատ մը երևելի և շատ օգտակար մարդեր և կիներ սյապիտի տուներէ ելած են:



ԴԻՒՐԻՆ ԶԳՏԱՆ ԶԱՆԻԿԱ ԾԱՂԵԼԸ

Կըտն ըստ անուն թերթը կը պատմէ դէպք մը որ պատահած է երբ Տրիսթրիս Պիլիպէլ Գ. Սմիթն Ամերիկեան Մէյն

նահանգին ֆուլպի Համարարանին մէջ փրօֆէսոր էր : Գոլէճին նախագահը սովորութիւն ունէր ամէն առաւօտ անձամբ առաջնորդել մատուռի պաշտամունքին, բայց քանի մը օր հիւանդանալուն պատճառաւ իրեն տեղը փրօֆ. Սմիթհ առաջնորդեց : Ուսանողները ուղեւոր կատակ մը ընել իրենց դեռահասակ ուսուցչին, Սուրբ Գիրքը վերցուցին բեմէն և տեղ մը պահեցին : փրօֆ. Սմիթհ երբ բեմն ելաւ և հոն չգտաւ Սուրբ Գիրքը, առանց փնտռելու համար ժամանակ կորսնցնելու, գոց ըսաւ ուրիշ գլուխ մը ամբողջ : Երբորդ առաւօտուն, գրասեղանին վրայ նորէն Սուրբ Գիրք չկար, և նա աւելի երկայն գլուխ մը գոց ըսաւ : Չորրորդ առաւօտուն, Սուրբ Գիրքը տակաւին պահուած էր, ուստի փրօֆէսորը, տղոց ըրածին վայելուչ փոխարէն մը ընելով, գոց ըսաւ Ղուկասու Աւետարանին ամենէն երկայն գլուխներէն մին, եօթանասունըմէկ համարներ : Խօսեցաւ իմաստալից ուճով, Սուրբ Գրոց ընթերցման համար սովորաբար սրուածէն շատ մը աւելի ժամանակ առնելով : Ուսանողները հասկցան որ փրօֆ. Սմիթհի հետ գլուխ պիտի չկրնան ելլել, ուստի ա՛լ չպահեցին Սուրբ Գիրքը : Բառ մը անգամ չխօսուեցաւ, բայց հետեւեալ օրը Սուրբ Գիրքը նորէն երևցաւ գրասեղանին վրայ : Տր. Սմիթհ այս դէպքը խումբ մը բարեկամներու պատմեց իր մահուրնէն քիչ առաջ : Անոր քոյրը Միսիս Փարքըրը, որ տակաւին ողջ է, այս բանը պատմելու ատենը ըսած է թէ, «Մեր կեանքին գլխաւոր ուրախութիւնը միշտ եղած է եղբօրս և իմ ամբողջ Սուրբ Գիրքին ընտանութիւնը և ճշգրիտ դիտութիւնը :»

ՅՈՎՀԱՆՆԵՍ ՄԿՐՏՁԻ ԳԼԻԱՏՈՒՄԸ

Այս դէպքը մեզքին խտտացնող ազդեցութեան տխուր մէկ օրինակն է : Հերովդէս իր եղբօր փիլիպպոսի կինը առած էր մինչ տակաւին ողջ էր փիլիպպոս : Անոր այս ըրածը ոչ միայն Հին կտակարանին մէջ Աստուծոյ հրամաններուն հակառակ էր, այլ բիրտ եղծում մըն էր արդարութեան և բարոյականութեան գաղափարներուն որ կային մինչև անգամ կռապաշտ ազդեցութեան մէջ : Յովհաննէս արդարութեան քարոզիչ էր, և զրկուած էր ժողովուրդը ապաշխարութեան յորդորելու, և այսպէս պատրաստելու զանոնք իրենց Մեսիան ընդունելու : Հերովդէս յաճախ կը կանչէր Յովհան-

նէսը անոր հետ խասակցելու համար, «ու անկէ լսելով՝ շատ բան կ'ընէր, և քաղցրութեամբ անոր մտիկ կ'ընէր» (Մար. Զ. 20) : Յովհաննէս հաւատարիմ չէր կրնար ըլլալ իր բարձր պաշ-

գիայի, սրտին մէջ կը թուի թէ բարի բան մը չկար : Հերովդիա երբեք ապաշխարութեան չարթեցաւ, բայց միայն անգութ և տնհայտ ատելութեան : Անոր սիրտը ինչպէս դառնա-



ՅՈՎՀԱՆՆԵՍ ՄԿՐՏՁԻ ԳԼԻԱՏՈՒՄԸ

տունին, ի թէ չյանդիմանէր Հերովդէսը անոր դործած մեղքին համար, անշուշտ յարգանքով և սակայն պարզօրէն և եռանդով : Թէպէտ բարի մարդ մը չէր Հերովդէս, սակայն բոլորովին անզգայ չէր մնար Յովհաննէսի խրատներուն առջև, բայց իր ապօրինաւոր կերպով առած կնոջ, Հերով-

ցած ըլլալու է որ ամէն ուրիշ նուէրներէ աւելի կ'ընարէ գլուխն այն մարդուն՝ որ զինք հաւատարմաբար յանդիմանած էր իր մեղքին համար :

ՊՏՈՒՂ ԲԵՐԵԼ

Արարչագործութեան բոլոր գաղտնիքներուն մէջ պատուը ամենէն մե-

ծերէն մէկն է : Պզտիկ սերմ մը եթէ հողին մէջ դրուի, խոնաւութիւն կը ծծէ, կ'ուռենայ, կը քայքայուի, արմատ մը կ'արձակէ դէպ ի վար, և բողբոջ մը դէպ ի վեր, և յետոյ տարիներով աւազուտ հողէն և դատարկ օդէն հիւթ, մանրաթել, փայտ, տերևներ, բողբոջներ, ծաղիկներ ծծելով՝ վերջապէս կու տայ պտուղ, ճփազոյներով, չքնաղ երևոյթով, նեկտարի համով ու հոտով, առողջարար և կենսատու :

Ուրիշ սերմ մը, որ նոյն հողին մէջ կ'իջնայ և կը սնանի նոյն արևին լոյսով,

անգամը : Երբ այս սերմը կը ցանուի սիրտերու և կեանքերու մէջ, կու տայ բողբոջ, ծաղիկ և պտուղ :

Քրիստոնեաները պէտք է պաղարեր ըլլան : Անոնք նմանցուած են որթի, թղենիի և ձիթենիի, որոնք ծանօթ ամենէն պաղարեր ծառերուն կարգէն են : Սուրբ Գիրքը մեզի շատ անգամ կը յիշեցնէ թէ ծառը իր պտուղէն կը ճանչցուի : «Բարի ծառը չկրնար չար պտուղ տալ :» «Միթէ փուշերէն խաղող կը քաղէն», կամ «տատասկէն թուզ» :

Ի՞նչ է քու կեանքդ : Անպտուղ որ-

ԳԱՅԼԸ ԵՒ ՈՉԽԱՐԸ


Այս պատկերին ներկայացուցած դէպքը դեղեցիկ լուսարանութիւն է մայրական բնագրի զօրութեան : Պիւրենեան լեռներուն մէջ, որոնք կը զատեն Գաղղիան Սպանիայէն, գայլ մը գառի մը մայելէն հրապուրուելով աւնոր մօտեցաւ, յուսալով թէ պատուական ճաշ մը պիտի ընէր : Բայց մայր ոչխարը անոր վրայ վազեց այնպիսի անակնկալ կատաղութիւնով՝ որ գայլը ապշած՝ անմիջապէս ետ քաշուեցաւ : Երբ գայլը ապուրթիւնը անցնելէն ետքը նորէն յարձակելու կը պատրաստուէր՝ արգիլուեցաւ, վասն զի հրացանի հարուած մը ընդունեց հովիւէն որ տեսած էր անոր առաջին յարձակումը : Անպաշտպան ոչխարի մը ուրիշ բան չէր կրնար այնպիսի քաջութիւն տալ, բայց եթէ իր ձագին վրայ ունեցած սէրը, այնպէս որ յարձակի իր ահաւոր թշնամիին վրայ :

ՃՇՄԱՐԻՏ ԲԱՋՈՒԹԻՒՆ

Սաստիկ բարկութեան մը ատեն Ռուբէն զարկաւ տղի մը, բայց ամչցաւ և ցաւեցաւ կիրքը անցնելէն ետքը : «Երանի՜ թէ աւանկ կիրք չեղէի, բայց ի՞նչ օդուտ, եղաւ, և չեմ կրնար ետ առնել եղածը», ըսաւ : «Եւ սակայն կայ ծուռ գործի մը հետեանքը քիչ շատ մեղմելու ճամբայ մը», ըսաւ ձայն մը անոր ներսի դիէն : «Ի՞նչպէս», հարցուց Ռուբէն : «Յանցանքը խոտովանելով», պատասխանեց ձայնը : Յանցանքի խոտովանութիւնը շատ բան կ'ընէ ծուռը շիտկելու մասին : Փորձէ :

Արդ, Ռուբէն մեզի ամենուս շատ կը նմանէր. գործին չէր դար ընդունիլ թէ յանցանք ըրած էր : «Սխալեցայ, ներէ ինձի», ըսելը դժուար է : Բայց բանին վրայ ո՛րչափ աւելի կը մտածէր, այնչափ աւելի կը համոզուէր թէ պէտք էր որ ըսէր այդ խօսքը : «Շիտակն ալ ատանկ ընելն է», ըսաւ ինքնիրեն : «Եթէ գիտնամ չիտակը և չընեմ, բարոյապէս երկչուտ կ'ըլլամ : Ատանկ պիտի ընեմ» :

Ուստի գնաց իր վնասած տղին, և յանցանքը խոտովանեցաւ աղատօրէն. և հետեանքն այն եղաւ որ երկու տղաքը առաջուրնէ աղէկ բարեկամներ եղան : Եւ Ռուբէնի ընկերը սկսաւ առաջուրնէ աւելի յարգել զանկա,



միայն փուշեր, տատասկներ յառաջ կը բերէ, կամ թթու, անպիտան պտուղ :

Տարբերութեան պատճառը ոչ հողն է և ոչ մշակութեան կերպը, այլ լոկ սերմն է : Հանճարը, խելքը աղէկ պտուղ չեն կրնար հանել գէշ սերմէն կամ գէշ ծառէն : Սերմը իր մէջ կը կրէ Աստուծոյ ազգած ոյժը և կեանքը : Աստուած սփռեց... Մարդոց մէջ ոչ մէկը կրնայ ամեն... տիկ սերմն անգամ չի՞նչ, սերմը իր... քերէն. դուռի կեանքի մեծ աղբիւրն է, կենդանի Աստուծոյն :

Սխալահիս մէջ ցանուած... նէն ընտիր սերմն է Աստուծոյ խօսքը : «Մերմ ցանողը խօսքը կը ց... և ցանուած սերմը պտուղ կը բերէ, իր երեսուն անգամը, վաթսուն անգամը և հարիւր

թի՜ թէ անբեր թղենիի կը նմանիս՝ Պտուղ երբեք չէ՞ս բերեր, թէ «չատ պտուղ» կը բերես, թէ «աւելի պտուղ» կը բերես : Բու պտուղները թունաւոր են, վայրենի ձիթենի՞ ես թէ փուշ և տատասկ :

Այս բանին վրայ շատ մտածէ. խորհրդածէ քու բոլոր ըրած գործերուդ վրայ, և հարցուր, «Թո՛ւզ են թէ փուշ» :— ճփա, հասուն, անոյշ և առողջարար թո՛ւզ, թէ սուր, խաճնող և վնասող փուշ, որ միայն կրակը նետուելու յարմար է :

Աստուած կարող է աղէկ պտուղ հանել անբեր հողէն : Կրնայ ցանել բարութեան սերմեր այնպիսի տեղեր ուր մեղք միայն բուսած է : Փուշի տեղ կրնայ եղենափայտ բուսցնել, և տատասկի տեղ՝ մրտենի : Կրնայ քու խոպանացած հողը սիրուն և աղէկ ուսուցուած պարտէզի փոխել :

վասն զի Ռուբէն բաւական քաջութիւն ցուցած էր այնպիսի դժուար բան մը ընելու, երբ տեսաւ թէ պէտք էր ընել:

Յիշեցէք որ լոկ ուղղութեան համար ուղղութիւն ընելու մէջ այնքան քաջութիւն կայ, որքան կայ վանձիկ և դիւցադնական գործեր ընելու մէջ, որոնք բոլոր աշխարհ կը հուշակուին:

ՀԱՒԱՏԱՐԻՄ ԽԱՂՂՆԿԵՐ ՄԸ

Վայրենի և ընտանի կենդանիներու մէջանոց բարեկամութիւն տեսնուած է և բացատրութիւններ տրուած են շատ անձանց կողմանէ որոնք կը սիրեն և կը դիտեն մեզի այնքան մօտ ապրող արարածները: Այսպիսի բարեկամութեան ամենէն սիրուններէն մէկը Ամերիկացի բարեկամ մը կը պատմէ:

Երբ տղայ էի, կ'ըսէ, յաճախ պտուտելով կ'երթայի բլուրի մը գագաթը, ուրիշ կրնայի տեսնել ընդարձակ տարածութեամբ գեղ մը: Գիտցուած էր որ բլուրին կողին վրայ տեղ մը բոյն ունէր աղուէս մը: Տղաք փնտռուած էին բոյնը, բայց մինչև անգամ թիճէին, խոշոր Նիւֆրնալէնտի շան մը, օգնութեամբ կարող եղած չէին գտնել աղուեսին պահուրսած տեղը: Օր մը տղայմէն մէկը հանդարտ նստած էր բլուրին կողին վրայ, և հաճախ կենդանիի մը արագ արագ և ծանր շնչառութեան ձայնը: Աւելի ուշադրութեամբ մտիկ ընելով լսեց շան մը կարծ կարճ հաչելու ձայններ, և իսկոյն հասկացաւ որ քանի մը կենդանիներ մէկտեղ կը խաղային: Բայց կարի զգուշութեամբ հեռացաւ մնացածուէն և տեսաւ որ բլուրին կողին վրայ երեք փոքրիկ աղուէսներ և իրենց շունը թիճէ աշխուժիւ կը խաղային իրարու հետ: Իջնուկ թիճէն գետինը կը թառայէր և կը վազվառէր, յայտնապէս ցուցնելով թէ շատ կ'ախորժէր իր ընկերներէն, մինչ աղուեսի ձագերը կը թուէր թէ իրենց հակա խաղընկերէն մեծ հաճոյք կը զգային: Տարտասանը հինգ բոլոր պայտէս խաղալէ ետքը աղուէսները քաշուեցան, ինչպէս կ'երևար, ուղղակի բլուրին կողին մէջ. և թիճէ լլծորէն տուն դարձաւ: Յաջորդ օրը յիշեալ տղան, իր եղբայրը և թիճէ գացին նոյն բլուրին գագաթը: Տղաքը տարակոյս չունէին թէ հիմա պիտի կարենային ձեռք ձգել ամբողջ աղուեսի բնամիջքը. բայց հասկցուեցաւ որ թիճէ տարբեր կը խորհէր: Բարձրաձայն և կատաղաբար հաչել սկսաւ, և թէպէտ տղան վստահ էր թէ ուղղակի կ'երթային հոն ուր աղուեսի ձագերը աներևութացած էին առջի օրը, թիճէ չուզեց գտնել անոնց հետքը: Տղաքը վեր առաջնորդեց բլուրին միւս կողին վրայ և շատ մը հեռի այն տեղէն ուր իր խաղընկերները պահուրս տած էին, ազդարարութիւն ընդունած ըլլալով իր հաչիւններէն որպէս զի չերենային:

ԽԱՐԵԲԱՅ ԿԱՊԻԼՔ

Անգամ մը մարդ մը որ կապիկ մը ունէր, զանիկա չլիժայով կապեց ցիցի մը որպէս զի արգիլէր զանիկա վնասներ գործելէ: Յիցին վերի ծայրը հորիզոնաձև հաստատուած ձողէն կապիկը նախանձոտ աչքով տեսաւ նապաստակի երկու ձագեր որոնք կը ցատկըտէին բակին մէջ: «Եթէ ես շղթայով կապուած եմ, ատոնք ալ բան տարկուած են», ըսաւ ինքնիրեն:

Շղթան ցիցին վերի ծայրի ձողին վրայ ձգելով մէկ կողմ ցատկեց և մէկ թևովը կախուեցաւ ձողին վրայ: Յետոյ երկու ձեռքերով ալ բռնեց զանիկա և բազուկները տարածած ձևով կեցաւ: Նորէն, թևերը թող տալով ոտքերովը բռնեց ձողը, և ի վերջոյ պոչը անոր փաթթելով գլխովայր կախուեցաւ: Այսպէս քանի մը վայրկեան խաղեր խաղաց և զարմացուց նապաստակները որ զինք կը դիտէին: Երբ ձողի (կապիկը) վար գետին իջաւ հանգչելու համար, նապաստակին մէկը, Պէքի, որ իր ընկերին հետ նրստած էր, վար ցատկեց և շնչեց միւսին որ կը կոչուէր Պոպ, «Հարցուր թէ ինչպէս սորվեր է այդ զարմանալի խաղերը»: Ճոքոյն միակ պատասխանն եղաւ ակնարկներ ընել Պոպին: Եւ երբ զինք ստիպեցին ըսելու, ցիցին վեր սողուեցաւ, և կրկնեց իր խաղերը շատ մը ուրիշներ ալ աւելցնելով անոնց վրայ:

«Կ'ուզէք գիտնալ թէ ինչպէս սորվեցայ, այնպէս չէ», ըսաւ Պոպին: «Գուք ալ կ'ուզէք սորվիլ»: «Ինչ օգուտ, մենք ցիցին վրայ չենք կրնար ելլիլ», պատասխանեց նապաստակը: «Ձեք կրնար մինչև որ չսորվիք և ոյժ չըստանաք խաղերը կատարելու: Եթէ կարենաք ծառ ելլել, կրնաք աղատուիլ շուններէն, ուտել ամենէն ընտիր պտուղները և ձեր բնակարանը ծառերուն մէջ շինել»: «Բայց մեր ոտքերը վաղելու և գետինը փորելու համար միայն շինուած են», պատասխանեց Պոպ: «Պո, ամէն ինչ որ կրնաք ընել հիմա խոտ ուտել, փորել և վազել է: Կապիկ մը անգամ ատկէ աւելի բան չկրնար ընել եթէ աւելի աղէկ կերակուր չուտէ», ըսաւ ձեռք երեսը ծուռ կելով:

«Ինչո՞ւ կապուած ես այդ ցիցին», հարցուց Պէքի, սիրտը նեղանալով կապիկին հեզնութիւններուն համար: «Չունիկա չգողցնելու համար: Մեր տէրը ուրիշ ցից մը չունի ասկէ զատ, և կ'ուզէ որ պահեմ ասիկա իրեն համար: Կ'ուզէք ծառ ելլել սորվիլ»: «Այո, ինչպէս կրնանք սորվիլ»: «Ոհ, ուրեմն ըսելու եմ ձեզի», պատասխանեց կապիկը: «Միայն պէտք է աղէկ ականջ դնէք»:

Երկու նապաստակներն ալ շատ հետաքրքրուելով կը փափաքէին գիտնալ գաղտնիքը: Իսկ նենգամիտ կապիկը այնպէս ձևացուց թէ ակամայ ստիպուած էր յայտնել գաղտնիքը, և

վերջապէս ըսաւ. «Մտ եկէք ինծի: Հիմա խոտացէք թէ երբեք ուրիշ պիտի չպատմէք, և պիտի ընէք ճիշդ ինչ որ կ'ըսեմ»: Երբ անոնք խոտացան, շարունակեց. «Պէտք է որ կարծր կերակուր ուտէք: Ծառերու կեղև կերէք, և ան ատեն սկիւռի պէս կրնաք ծառ ելլել: Գիտէք որ սկիւռը կաղին, ընկողը և ուրիշ կարծր բաներ կ'ուտէ»: «Կեղև ուտելը օգուտ չունի», պատասխանեց Պոպ: «Երբեք փորձած էք», հարցուց ձեռք: «Ոյ, երբեք փորձած չենք», պատասխանեց Պէքի: «Ուրեմն քանի մը օր փորձեցէք ուտեսէք: Եթէ օգուտ մը չտեսնէք, ա'լ մի ուտէք»:

Պէքի և ձեռք համոզեցին Պոպը որ փորձէ երեք օր: «Չգուշացիր որ մէկը չտեսնէ քեզ, պէտք է որ դիտեր ուտես: Ընթրիքը ծառի կեղևէ ըրէ», ըսաւ ձեռք:

Հետեւեալ առաւօտ քանի մը մտաղ ծառեր գէշ կերպով արուած էին: Երկրորդ առաւօտը աւելի ծառեր մերկացուած էին իրենց կեղևներէն. և երրորդ առաւօտ տանուտէրը ըսաւ իր ծառային, «Յակոբ, պէտք է որ բոյն մը շինես և այդ նապաստակները փակես անոր մէջ: Անոնք բաւական ծառեր արեր են կեղևները ուտելով»:

«Ինչպէս ես, կը սիրե՞ս կեղևէ ընթրիքներդ, Պոպ», հարցուց ձեռք երբ տեսաւ նապաստակները անոնց բանախն թեղէ պատին մէջէն:

«Մենք արժանապէս պատժուեցանք», պատասխանեց Պոպ, «ոչ միայն գողութիւն ընելով, այլ մտիկ ընելով նենգաւոր կապիկի մը: Թէպէտ դուն մեր ազատութենէն զրկեցիր մեզ քու սուտերովդ, յիշէ որ այդ բանը չեք կրնցուց քու շղթադ, ոչ ալ աւելի դիւրացուց քու գերութիւնդ: Եւ սակայն եթէ մեր նեղութիւնը ուրիշներուն կը սորվեցնէ զգուշանալ բարեկամներէ որոնք չարիքներու կ'առաջնորդեն, պարապը գացած չլլար մեր քաջած նեղութիւնը: Մենք գոնէ սորվեցանք թէ վտանգաւոր է չար գործել բարիքի համար որ կրնայ անկէ յառաջ գ...»



ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ
Ի ՏՊԱՐԱՆԻ Ա. ՅԱՌՈՐ ՊՅՈՒՅՆԱՆ